ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «09» 03 2020թ N 350-Ա

«ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՊՄԳ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը.

հրամայում եմ.

1. Հաստատել՝ «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը» 2020 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության արդյունաբերական քաղաքականության վարչության պետ Արմեն Եգանյանին՝ սույն հրամանի հաստատումից հետո այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

4. Նախարարության գլխավոր քարտուղարին՝ սույն հրամանը հաստատվելուց հետո 2-շաբաթյա ժամկետում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի հետ կնքել սույն հրամանի 1-ին կետով հաստատված ծրագրի իրականացումն ապահովելու

նպատակով 867020.0 հազար դրամի դրամաշնորհի տրամադրման պայմանագիր՝ սահմանելով ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի
Դեկտեմբեր 03-ի N 350-Ա հրամանի

2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՊՄԳ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

I. ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Ձեռնարկատիրական ակտիվներում մասնավոր ներդրումները կայուն զարգացման կարևոր նախապայման են: Նշված գործընթացն անհրաժեշտ ծավալով սպասարկելու հարցում էական նշանակություն կունենան օտարերկրյա ներդրումները: Բարձր տեմպերով տնտեսական աճ արձանագրելու նպատակով ներքին խնայողություններն առաջիկա տարիներին բավարար չեն լինի:

2. Ծրագրով նախատեսվում է ապահովել Հայաստանի Հանրապետությունում պոտենցիալ խոշոր ներդրողներին լիարժեք և համալիր խորհրդատվության և աջակցության տրամադրում, որը կնպաստի Հայաստանում ներդրումային հոսքերի ավելացմանը, ոլորտային ծրագրեր նախաձեռնելու և իրագործելու միջոցով Հայաստանի տնտեսության ներուժի զարգացմանը և գիտատեխնիկական զարգացման արդյունքների ներդրմանը տնտեսության տարբեր ոլորտներում, Հայաստանում գործարար միջավայրի բարելավմանը և գործարար հատվածի համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծմանը և կատարելագործմանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստանձնել է Պետական-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ ՊՄԳ) ամբողջական, համակարգային մոտեցման և Հայաստանում դրանց իրականացման համար ամուր հիմքերի մշակման հանձնառություն, որի նպատակն է մասնավոր հատվածի ուժեղ կողմերի և հնարավորությունների համախմբման միջոցով նպաստել տնտեսական և սոցիալական

զարգացմանը Հայաստանում, միաժամանակ ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավման, երկկողմ պարտավորությունների սահմանման միջոցով խթանել միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացումը:

4. ՊՄԳ կիրառումը լավ հնարավորություն է նպաստելու երկրի ենթակառուցվածքների զարգացմանը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, մասնավոր հատվածի ֆինանսական և ոչ միայն ֆինանսական հնարավորությունների կենտրոնացմանը, պետություն-մասնավոր հատված երկխոսության արդյունավետ իրագործմանն ու ապահովմանը:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5. Ծրագրի մշակման համար հիմք են՝

1) «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2017 թվականի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրության 38-րդ կետով հավանության արժանացած ««Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթղթին հավանություն տալու մասին» որոշումը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6. Ծրագրի նպատակներն են՝

1) օտարերկրյա ներդրումների ներգրավումը և դրանց ուղղումը ՀՀ տնտեսության իրական հատված.

2) ներդրումներ իրականացնելու միջոցով նպաստել ներդրումային քաղաքականության թիրախում գտնվող ոլորտների զարգացմանը, այդ թվում՝ արտահանման խթանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, ՀՀ մարզերի համաչափ զարգացմանը, զարգացման և աճի մեծ ներուժ ունեցող հավակնոտ ծրագրերի բացահայտմանն ու ֆինանսավորմանը.

3) ՀՀ-ում պոտենցիալ խոշոր ներդրողներին լիարժեք և համալիր խորհրդատվության և աջակցության միջոցով նպաստել ՀՀ-ում ներդրումային հոսքերի ավելացմանը.

4) Հայաստանի մասնակցությամբ միջազգային ֆինանսական և առևտրատնտեսական հարաբերությունների ընդլայնումը.

5) Ոլորտային ներդրումային ծրագրեր նախաձեռնելու և իրագործելու միջոցով նպաստել Հայաստանի տնտեսության ներուժի զարգացմանը և գիտատեխնիկական զարգացման արդյունքների ներդրմանը՝ տնտեսության տարբեր ոլորտներում.

6) Ընկերության համագործակցությունը վերազգային կորպորացիաների հետ և համապատասխան ներդրումների ներգրավման համար հնարավորությունների ստեղծում

7) պատրաստի ներդրումային փաթեթների ձևավորումը և դրանց հիման վրա խոշոր ներդրողների հետ աշխատանքների կազմակերպումը (փնտրել/առաջարկել/ներկայացնել).

8) կիրառել և խթանել պետություն-մասնավոր գործընկերություններն այն դեպքերում, երբ վերջիններս կարող են տնտեսությանը և հասարակությանն ավելի մեծ զուտ օգուտներ բերել, քան հանրային հատվածի ավանդական ծրագրերը:

7. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

1) Հայաստանում առնվազն 10 օտարերկրյա խոշոր ներդրումային ծրագրեր ներգրավում.

2) առնվազն 30 գործարար կապերի հաստատում օտարերկրյա խոշոր ընկերությունների հետ:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

8. Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) ծրագիրը իրականացվում է վերոնշյալ նպատակների իրականացման համար ստեղծված «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով.

2) ծրագրից բխող միջոցառումները, դրանց շրջանակներում կատարման ենթակա գործառույթները, ակնկալվող արդյունքները, դրանց գնահատման չափանիշները և վերջնաժամկետները, ինչպես նաև միջոցառումների համար պահանջվող ֆինանսական միջոցները սահմանվում են «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքվող պետության կողմից դրամաշնորհի ձևով

տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրով.

3) օտարերկրյա կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերը կարող են իրականացվել համաֆինանսավորման սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

9. Ծրագրի իրականացման ուղղությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1) **Տեխնիկական ուսումնասիրություններ**. Սույն միջոցառման շրջանակներում ուսումնասիրվելու են Հայաստանի Հանրապետությունում գործող ենթակառուցվածքային և այլ հանրային ներդրումային ծրագրերը, ինչպես նաև վեր են հանվելու հնարավոր նոր ներդրումային ծրագրեր, որոնք նպատակահարմար կլինի իրականացնել ինչպես մասնավոր ներդրումների հաշվին, պետության և մասնավոր հատվածի համաֆինանսավորմամբ, այնպես էլ կիրառելով ՊՄԳ գործիքակազմ:

Վերը նշված ծրագրերի (հնարավոր ծրագրերի) ուսումնասիրության արդյունքում պետական տնտեսական քաղաքականությունից ելնելով՝ կիրականացվի ծրագրերի դասակարգում ըստ առաջնահերթությունների:

2) **Ֆինանսական խորքային ուսումնասիրություններ**. Սույն միջոցառման շրջանակներում կիրականացվի տեխնիկական ուսումնասիրության արդյունքում ընտրված ծրագրերի խորը ֆինանսական վերլուծություն, որը կներառի հնարավոր ներդրումային ծրագրի ֆինանսական արդյունավետության գնահատումները, դրա իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալները, ուղղությունները, հնարավոր աղբյուրները և այլն: Ֆինանսական ուսումնասիրության արդյունքում ծրագրերը կդասակարգվեն ըստ իրականացման մոդելների: Մասնավորապես, կդիտարկվեն ՊՄԳ ձևաչափով, հանրային կամ մասնավոր ներդրումներով կամ համաֆինանսավորմամբ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

3) **Իրավական վճարներ**. Սույն միջոցառման շրջանակներում վերոնշյալ ներդրումային ծրագրերի հետ կապված պետք է վեր հանվեն իրավական կարգավորումները, ռիսկերը, իրականացվի իրավական ամբողջական գնահատում և մշակվեն համապատասխան

փաթեթներ, ինչը հնարավորություն կտա յուրաքանչյուր ծրագիր իր իրականացման մոդելին համապատասխան անխոչընդոտ իրագործել:

Արդյունքում, ակնկալվում է, որ վերոնշյալ ծրագրերի մասով կձևավորվեն ամբողջական փաթեթներ՝ ներառելով հնարավոր բոլոր թույլտվությունների, կնքվելիք պայմանագրերի և այլ իրավական հարցերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և լուծումներ:

4) **Ներդրումային բանկային վճարներ**. Միջոցառման շրջանակներում նախատեսվում է պետության և մասնավոր հատվածի համաֆինանսավորման ձևաչափով իրականացվելիք ծրագրերում պետության մասնակցության ապահովում, ինչպես նաև խոշոր ծրագրերում մասնավոր ներդրողներ ներգրավելու նպատակով ներդրումային ծառայությունների ձեռքբերում:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. Սույն ծրագրի 9-րդ կետով նախատեսված միջոցառումները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 867,020.0 հազ. դրամի չափով, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):